

**«Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ
ֆինանսավորում» թիվ 9202-AM վարկային ծրագիր
Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկ (ՀՀ ԱՆ
ԱԾԻԳ ՊՀ)
Հետաքրքրություն ներկայացնելու հրավեր
(խորհրդատվական ծառայություններ-Անհատ խորհրդատուի ընտրություն)**

Վերնագիր: Իրավախորհրդատու(անհատ խորհրդատու)

Ծածկագիր: CR5/AF/IC/B-C/003-22

Իրավասություն: Բոլոր խորհրդատուները, որոնք համապատասխանում են նշված պահանջներին

Սկիզբ: 6 Հունիսի, 2022թ.

Տևողություն: 12 ամիս, հնարավոր երկարացումով

Տեղակայում: Երևան, ՀՀ

Աշխատանքի նկարագիր: Սույնով ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ը հրավիրում է Իրավախորհրդատուի (անհատ խորհրդատու) միանալ թիմին՝ աջակցելու «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ (ԱԾԻԳ) աշխատակազմին ՀՀ առողջապահության նախարարության (ԱՆ) կողմից իրականացվող բարեփոխումների շրջանակում, ինչպես նաև աջակցել ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքներին:

Աշխատանքային պարտականություններ:

- ✓ Հայաստանում ամբուլատոր և ստացիոնար ծառայությունների կազմակերպման գործող օրենսդրական/իրավակարգավորող դաշտի գնահատում,
- ✓ Հայաստանում բժշկական ծառայությունների մատուցման հետ կապված իրավական և օրենսդրական դաշտի բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,
- ✓ Իրավական աջակցություն ԱԾԻԳ-ին և ԱԽ-ներին առաջարկվող բարեփոխումներին օժանդակող տարբեր տեսակի փաստաթղթերի մշակման հարցում, մասնավորապես՝
 - Ստացիոնար և ամբուլատոր ծառայությունների բաշխման գնահատում ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման համաձայն,
 - ՀՀ կառավարության ծրագրի առողջապահական մասի և 2021-2026 թվականների գործողությունների ծրագրի գնահատում,
 - Մասնակցություն վերջին տասնամյակում առողջապահական համակարգի օպտիմալացման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ ամփոփ հաշվետվության պատրաստմանը, ներառյալ՝ ՀՀ կառավարության 5-ամյա գործողությունների ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման վերաբերյալ,
 - Մասնակցություն և իրավական աջակցություն ՀՀ-ում ինտեգրված առողջապահական ծառայությունների մատուցման Մասթեր պլանի մշակման հարցում,

- Մասնակցություն և իրավական աջակցություն ՀՀ-ում անհետաձգելի բուժօգնության կենտրոնացված ծառայությունների ներդրման գործողությունների ծրագրի մշակման հարցում,
- Իրավական աջակցություն բուժօգնության որակի բարելավման ուղղությամբ տարվող՝ ռազմավարությամբ նախատեսված աշխատանքներին:
- ✓ Մասնակցություն ԱՆ աշխատանքային խմբերի աշխատաժողովներին, հանդիպումներին և քննարկումներին,
- ✓ Կատարել ԱԾԻԳ-ի և ԱՆ պաշտոնատար անձանց կողմից հանձնարարված և տվյալ հանձնարարականի հետ կապված այլ պարտականություններ:

Պահանջվող որակավորում:

- Բարձրագույն իրավաբանական կրթություն (Մագիստրոսի աստիճան),
- Միջազգային կազմակերպություններում կամ ՀԲ-ի կամ այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ իրականացվող ծրագրերի շրջանակներում աշխատելու առնվազն երկու տարվա մասնագիտական փորձ,
- Առողջապահության օրենսդրական դաշտի, առողջապահական համակարգի ներկա վիճակի, մոտեցումների և ոլորտում որդեգրված քաղաքականության իմացությունը կդիտվի որպես առավելություն,
- Հայերենի գերազանց իմացություն (գրավոր և բանավոր), անգլերենի լավ իմացություն,
- Գերազանց բանավոր և գրավոր հաղորդակցման հմտություններ և մասնագիտական վարքագիծ,
- Microsoft Office-ի, ներառյալ Word, Excel և Outlook-ի գերազանց իմացություն,
- Ինքնուրույն և մեծ ծանրաբեռնվածությամբ աշխատելու, սահմանված ժամկետները պահպանելու ունակություն,
- Mulberry-ով (Փաստաթղթերի կառավարման էլեկտրոնային համակարգ) աշխատելու ունակությունը կդիտվի որպես առավելություն:

Վարձատրություն: Մրցակցային

Դիմելու Գործընթաց: Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք ուղարկել իրենց ինքնակենսագրականները (CV) և ուղեկցող նամակները (cover letter)՝ procurement@healthpiu.am և info@healthpiu.am էլ.փոստի հասցեներին, վերնագրում հստակ նշելով “Legal assistant, CR5/AF/IC/B-C/003-22”:

Սկիզբը: 26 Ապրիլի, 2022թ.

Վերջնաժամկետ: 11 Մայիսի, 2022թ.

Կազմակերպության մասին: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ը հիմնադրվել է 1999 թվականին, իսկ պետական հիմնարկի կարգավիճակ է ստացել ՀՀ Կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 765 որոշման համաձայն: ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ-ը աջակցում է ՀՀ Առողջապահության նախարարությանը և պատասխանատու է առողջապահական ծրագրերի ընդհանուր համակարգման, պլանավորման, կառավարման, վերահսկման, ներառյալ՝ գնումների ու ֆինանսական գործառույթների իրականացման համար: **Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել <https://healthpiu.am/> վեբ կայք:**